# ԾԱՆՈՒՑՈՒՄՆ․

Վեհափառ Հայրապետի հրամանով և օրհնութեամբ Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանի տեսչութիւնն այսու հրաւիրում է բարեպաշտ ազգայիններին կամաւոր նուէրներով օգնութեան հասնելու Ճեմարանիս հանգուցեալ ուսուցիչ Վարդան Խաչատրեան Աբովեանի հինգ անչափահաս որբերին, որոնք իրենց մօր հետ միասին մեծապէս կարօտ են հասարակաց խնամքին և օժանդակութեանը, զրկուելով իրենց ծնօղից և խնամօղից։

Նուէրները կարելի է ուղարկել Ճեմարանիս վարչութեանը՝ հանգուցեալ Աբովեանի որբերի՝ ազգիս անդրանիկ վիպասանի թոռների անունով մի գումար կազմելու և դրա տոկոսիքով նոցա սննդեան և դաստիարակութեան պէտքերն հոգալու համար։

Արարատ ամսագրի էջերում պարբերաբար կը հրատարակուի ի գիտութիւն հասարակութեան բոլոր օժանդակութիւնների հաշիւը նուիրատուների անուանական ցանկի հետ միասին։

Աչքի առաջ ունենալով, որ հանգուցեալ Վարդան Աբովեանն երեսուն և հինգ տարի շարունակ մանկավարժական ասպարէզի մէջ լինելով, միշտ ազնիւ և բարեխիղճ պաշտօնեայ է եղել թէ զանազան ծխական ուսումնարաններում և թէ 1876 թուից մինչև օրս շարունակ Հոգևոր Ճեմարանում և Երևանի թեմական դպրանոցում, վարչութիւնս մեծայոյս է, որ բարեպաշտ ազգայինք չպիտի խնայեն իրենց լուման՝ մի բազմամեայ և բազմավաստակ հայ ուսուցչի որբացեալ ընտանեաց կեանքն ըստ արժանւոյն ապահովելու համար։

Տեսուչ Ճեմարանի՝ Կ. Կոստանեանց.

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ. ՄՈՍԿՈՒԱ.

Հանգուցեալ Պետական Խորհրդական

ԴԱՆԻԷԼ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ ՔԱՆԱՆԵԱՆԻ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ՄՐՑԱՆԱԿԻ ՆԻՒԹԸ.

«ՀԱՅԵՐԸ ԲԻՒԶԱՆԴԻԱՅՈՒՄ՝ ՄԻՆՉԵՒ ԽԱՉԱԿՐԱՑ ԱՐՇԱՒԱՆՔԸ» (մանաւանդ Բիւզանդական աղբիւրների հիման).

Շարադրութիւնը կարող է ներկայացուել Հայերէն, Ռուսերէն, Ֆրանսերէն կամ Գերմաներէն։

Շարադրութիւնը պէտք է ներկայացուի ոչ ուշ քան 1-ն Յունուարի 1898 Թ.

Լաւագոյն շարադրութիւնը յիշեալ նիւթի մասին կը պարգևատրուի Խորհրդարանի կողմից եօթն հարիւր րուբլի մրցանակով։

Վերատեսուչ Ճեմարանի Գ. Քանանեան

Քարտուղար Խորհրդարանի Գ. Խալաթեան

10 Հոկտեմբերի, 1895 Թ.

Մոսկուա.


„ՄՈՒՐՃ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ.

Տարեկան գինն է 10 ռ.

Հասցէն. Тифлис, Въ Редакцію журнала „МУРЧЪ“

Արտասահմանից. Tiflis. Rédaction be la Revue „MOURTCH“

ԺԵ. ՏԱՐԻ.

„ԱՂԲԻՒՐ“

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

3 ՊՐԷՄԻԱՆԵՐՈՎ.

Բաժանորդագինը 3 ր.

Ը. ՏԱՐԻ.

„ՏԱՐԱԶ“

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ. 6 Ր.

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „АГБЮРЪ“,—„ТАРАЗЪ“.

Ժ. ՏԱՐԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

„ԱՐԱՔՍ“

Վեցամսեայ.

Բաժանորդագինն է 3 րուբլի.

Ուսանողներից գինը արժէ 2 րուբ. 50 կ.

Հասցէն՝ С. Петербургъ, Симеону Гуламирянцу.

St. Pétersbourg, Siméon Goulamiriantz.